2020, ՀՈՒՆՎԱՐ Ա, ԹԻՎ 1 (549)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԱՆՈՐՅԱ ՈՒՂԵՐՁԸ

Միրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի հայրենիս եւ ի սփյուռս,

Ամանորի տոնական այս երեկո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրական սիրով Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում ամենքիդ:

Ամանորը ժամանակի յուրօրինակ սահմանագիծ է հնի եւ նորի, անցյալի եւ ապագայի միջեւ եւ առիթ՝ գնահատելու անցած ուղին, արարված լավն ու բարին, թույլ տրված սխալները, որովհետեւ դրանց անկեղծ ու շիտակ գնահատականն է պայմանավորում այն տեսլականն ու ակնկալությունները, որոնցով մուտք ենք գործում 2020 թվական:

Անցնող՝ 2019 թվականը պետական կյանքի վերակազմակերպման, նոր ծրագրերի, իրագործումների ժամանակ եղավ: Հայրենական, ազգային եւ հոգեւոր մեր անդաստանում ունեցանք հաջողություններ: Դրական իրագործումների կողքին տակավին առկա են հրատապ լուծման կարոտ խնդիրներ եւ նոր մարտահրավերներ, որոնք պահանջում են մեր ողջ ժողովրդի համատեղ ջանքն ու աշխատանքը: Յուրաքանչյուրիս ծառայանվիրումի ոգին, պատասխանատվությունն ու դավանած արժեքներն են, որ պիտի իրական դարձնեն հզոր հայրենիքի, պայծառ ապագայի մեր տեսիլքները:

Նոր տարին նոր սկիզբ է մեր կյանքը նորոգելու եւ առաջընթացի ուղիներում հաստատուն պահելու: Մենք՝ բոլորս, պատասխանատու ենք մեր ապրած յուրաքանչյուր օրվա համար: Պատասխանատու ենք Աստծո, մեր պատմության, մեր նախնյաց եւ սերունդների առջեւ: Հայրապետիս հորդորն ու պատգամն է, սիրելինե՛ր, որ այս գիտակցությամբ անենք առավելագույնը՝ Հայաստանն ու Արցախը հզորացնելու, մեր կյանքը խռովող երեւույթները փարատելու, ամրապնդելու համերաշխության ոգին մեր հասարակության մեջ եւ միասնականությունը ազգային մեր կյանքում: 2020 թվականը հայրենաշինության եւ ազգային կյանքի պայծառացման տարի դարձնենք միմյանց հանդեպ սիրով, բարու մեջ մեր նախանձախնդրությամբ եւ միշտ ապավինելով Աստծուն, քանզի ինչպես սաղմոսերգուն է ասում, «Տերը մոտ է բոլոր նրանց, ովքեր կանչում են Իրեն, բոլոր նրանց, ովքեր կանչում են Իրեն ճշմարտապես» (144:18):

Ամանորի այս հուսառատ պահին Մեր ջերմ բարեմաղթանքներն ենք բերում ամենքիդ՝ պաշտոնյա, գործարար, մտավորական, արվեստագետ, հողի մշակ ու աշխատավոր, բոլոր բոլորիդ, որոնց ջանքերի, հավատքի, նվիրումի շնորհիվ զորանում են կամքն ու վճռականությունը՝ կերտելու մեր հայրենիքի ու ժողովրդի անկասելի առաջընթացը: Հայրապետիս սերն ու բարձր գնահատանքը՝ Հայոց բանակի յուրաքանչյուր քաջարի զինվորին: Մեր աղոթքն ու օրհնությունը՝ Նոր տարին ծառայության մեջ դիմավորողներին եւ այս պահին ընտանեկան օջախից հեռու գտնվողներին: Աղոթենք միասնաբար Մերձավոր Արեւելքում դժվարություններ դիմագրավող մեր ժողովրդի զավակների, նաեւ նեղության մեջ գտնվողների, հոգով եւ մարմնով տկարների համար:

Մեր աղոթքը բարձրացնենք աշխարհի խաղաղության համար՝ հայցելով, որ բարին Աստված Իր Սուրբ Աջի ներքո պահպանի մեր հայրենիքը, մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի եւ արդյունավորի Հայաստանի եւ Արցախի մեր իշխանությունների ջանքերը դարերով փայփայած անկախ պետականության զորացման ճանապարհին:

Թող Փրկիչ մեր Տիրոջ սերն ու առատ շնորհները միշտ ձեզ հետ լինեն, հովանի՝ ձեր կյանքին եւ ձեր ընտանիքներին:

Շնորհավոր Նոր տարի:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Երբ ժամանակը լրումին հասավ,
Աստված ուղարկեց Իր Որդուն,
... որպեսզի մենք որդեգրություն ընդունենք»
(Գաղ. Դ. 4–5):

Միրելի՛ հավատավոր, բարեպաշտ ժողովուրդ,

Առ Աստված փառաբանությունը Մեր սրտում՝ ողջունում ենք ձեզ Քրիստոսի սուրբծննդյան կենսաբեր ավետիսով. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»: Փրկչի Սուրբ Ծննդյան տոնը քրիստոնյա ողջ աշխարհին խնդություն ու բերկրանք է բերում: Այսօր մեր սրտերում ու հոգիներում այդ ուրախությունն է թեւածում, որով համախմբվել ենք օրհնաբանելու Մանուկ Հիսուսի Սուրբ Ծնունդը, նորոգվելու Քրիստոսի պարգեւած կենարար շնորհներով:

«Երբ ժամանակը լրումին հասավ, Աստված ուղարկեց Իր Որդուն, ...որպեսզի մենք որդեգրություն ընդունենք»,– ասում է առաքյալը: Մարդկային մտքի համար դժվար ընկալելի է, թե ինչպես կարող է անսահման Աստված սահմանավորվել, Արարիչն Աստված արարված մարդու կերպարանք առնել: Մեր պատմահայր ս. Մովսես Խորենացին Քրիստոսի սուրբծննդյան այս հրաշազարդ իրողությունը իր գեղեցկահյուս շարականում կոչում է «Խորհուրդ մեծ եւ սքանչելի»: «Երկնքի ու երկրի համար անպարփակելին,– ասում է նա,– խանձարուրով պատվեց... եւ սուրբ այրի մեջ բազմեց»: Սուրբծննդյան սքանչելախորհուրդ այս իրողությունը, արդարեւ, հավատքով է ըմբռնելի, ինչպես հավատքով են տեսանելի Աստծո բարերար խնամքն ու գործերը, եւ զգալի՝ Տիրոջ կենարար ներկայությունն ու ներգործությունը: Այսօր մենք հավատքով հովիվների հետ ականջալուր ենք հրեշտակների ավետաբեր օրհներգությանը:

Շարունակությունը՝ էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ՝ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

«Քրիստոս Իր Սուրբ Ծնունդով ուղենշեց միմյանց
ու Աստծո հետ միավորված մնալու մեր ճանապարհը».
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս

Հունվարի 6-ին մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ս. Պատարագ մատուցեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում:

Պատարագի արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանը, պետական այրեր, ինչպես նաեւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Հայ Եկեղեցու բարերարներ, Հայաստանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական առաքելությունների ղեկավարներ, կրթական, գիտական եւ մշակութային հաստատությունների ներկայացուցիչներ, Հայաստանի տարբեր մարզերից ժամանած ուխտավորներ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններից կազմված խաչվառազարդ թափորը «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության ներքո հայրապետական իր օրհնությունը հավատավոր ժողովրդին բաշխող Ամենայն Հայոց Կաթողիկոսին Ս. Տրդատի մատուռից առաջնորդեց դեպի խորան: Պատարագին, որպես առընթերականեր, սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանն ու Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:

Ս. Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» հրեշտակաբարբառ ավետիսով ողջունեց աշխարհասփյուռ հայությանը եւ տոնի առիթով հղեց իր պատգամը:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ՝ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Սկիզբը՝ էջ 1

Արեւելքից ժամանած մոգերի հետ հավատքով տեսնում ենք քարայրում ապաստան գտած Սուրբ Ընտանիքին եւ խոնարհվում նորածին Հիսուսի առջեւ: Նա եկավ, ինչպես եւ առաքյալն է վկայում, որպեսզի մենք որդեգրություն ընդունենք:

Քրիստոսի Ծնունդը շնորհ է՝ արժեւորելու մարդկային կյանքը, դարձնելու նոր սկիզբ, նոր ճանապարհ դեպի աստվածճանաչողություն, դեպի Աստծուն որդեգրություն: Քրիստոսի Ծնունդը անզուգական սիրո, անսահման մարդասիրության վկայություն է: Մեր, որը զոհաբերվող է, ամբողջանվեր, որով մեծազոր Աստված Իր բարձրությունից խոնարհվեց, Տեր լինելով՝ ծառայի կերպարանք առավ, որպեսզի մարդկային կյանքն առաջնորդի փրկության, երկնքի արքայության, որպեսզի մաքրագործվեն ու վեհանան մարդկանց զգացումներն ու մտածումները, արդար ու բարի լինեն գործերը: Եկեղեցու սուրբ հայրերից Հովհան Ոսկեբերանն ուսուցանում է, որ Աստծուն որդեգրությունը մարդու նորոգությունն է: Ներքին վերափոխման, հոգեւոր վերածննդի այդ շնորհն ու զորությունն է բերում Փրկիչ մեր Տերը: Քրիստոսով հալչում են մեղքերը, փարատվում են հուսահատությունները, վախը դառնում է քաջալերություն, թշնամանքը՝ եղբայրսիրություն, բանսարկությունն ու զրպարտությունը՝ ուղղամտություն ու ճշմարտախոսություն, եւ դժվարությունների ու վշտերի մեջ ծագում է սուրբծննդյան լույսը՝ բերելով նոր աշխարհի, նոր կյանքի հույսն ու տեսլականը:

Միրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Սուրբ Ծննդյան այս հոգենորոգ օրը Մենք ցավ ի սիրտ պիտի անդրադառնանք նաեւ, որ ժամանակակից կյանքի բազմահոս, հակասական զարգացումներում, աշխարհիկացման, համահարթեցման հոսանքներում, մրցակցության անհոգի վազքերում, հաղորդակցության նոր հնարավորությունների ահռելի տարածքներում հաճախ կորսվում է Քրիստոսի Ծննդյան պատգամը: Քարոզվում են իրական արժեքների վտանգավոր նմանակումներ՝ պարպված աստվածսիրության ու մարդասիրության ճշմարիտ գաղափարներից եւ կառուցված ազատության ու իրավունքների սխալ ընկալումների ու մեկնաբանությունների վրա: Կանգնած ժամանակների այս նոր իրողությունների ու փոփոխությունների հանդիման՝ մենք ամուր պիտի մնանք ի Քրիստոս մեր հավատքի մեջ՝ վերարժեւորելով մեր անցյալը, ընտրելով նորոգությունն ու որդեգրությունը: Հավատավոր մեր ժողովրդի ներկայությունը եկեղեցիներում՝ աղոթական ու նվիրական զգացումներով, հոգեւոր խոնարհումը մանուկ Հիսուսի սնարի առջեւ մեր համընդհանուր պատասխանն են Քրիստոսով ապրելու, Քրիստոսով նորոգվելու, Քրիստոսով հարատեւելու աստվածային կանչին: Մենք՝ իբրեւ քրիստոնյա ժողովուրդ, Քրիստոսի Ծննդյան շնորհառատ այս օրը վերստին ամրապնդվում ենք հաստատակամությամբ, որ առավել վճռական պիտի լինենք քրիստոնեական մեր ինքնության վկայության մեջ, ազգային մեր կյանքը կառուցենք սիրո, համերաշխության հիմերի վրա, միաբանված լինենք մեր հոգեւոր արժեքներով, մեր հավատքով, մեր սրբազան հայրենիքի, մեր Սուրբ Եկեղեցու շուրջ: Քրիստոս Իր Սուրբ Ծնունդով ուղենշեց միմյանց ու Աստծո հետ միավորված մնալու մեր ճանապարհը: Ընթանանք այդ ճանապարհով՝ նորոգ բարեզարդելով մեր կյանքը, կյանքը մեր հայրենիքի եւ մեր ժողովրդի:

Այս մաղթանքով եւ Քրիստոսի սուրբծննդյան ավետիսով ողջունում ենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց նորընտիր Պատրիարք Ամենապատիվ Տ. Մահակ եպիսկոպոս Մաշալյանին, մեր Սուրբ Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին: Ի Քրիստոս եղբայրական սիրով Մեր ողջույնն ենք հղում քույր Եկեղեցիների հոգեւոր Պետերին եւ հավատավոր իրենց հոտին: Հայրապետական օրհնությամբ ողջունում եւ Մեր բարեմաղթանքներն ենք բերում Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Արմեն Սարգսյանին եւ Սրբազան Պատարագի արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության Վարչապետ տիար Նիկոլ Փաշինյանին՝ իր մեծազնիվ տիկնոջ հետ: Ողջույն ենք հղում Արցախի Հանրապետության Նախագահ տիար Բակո Սահակյանին եւ հայոց պետական ավագանուն, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին: Հայրապետական Մեր օրհնությունն ու սերն ենք բերում ի սփյուռս աշխարհի համայն մեր ժողովրդին:

Սուրբ Ծննդյան շնորհառատ այս օրը, սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր, միասնաբար աղոթենք մեր Փրկչին սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետի խոսքերով. «Նորոգող հնութեանց, նորոգեա եւ զիս, նորոգ զարդարեա»: Հայցենք միասնաբար, որ նորոգության երկնային պարգեւները բարեփոխեն աշխարհը համայն, բարօրությամբ շենանա ժողովուրդների ու պետությունների կյանքը, եւ Աստծո Սուրբ Աջի պահպանությունը միշտ հովանի լինի մեր հայրենիքին, հայրենյաց մեր հերոս պաշտպաններին, Մերձավոր Արեւելքում եւ այլուր դժվարությունների դիմագրավող մեր քույրերին ու եղբայրներին, աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին: Թող Փրկչի կենսանորոգ շնորհներով ու երկնառաք բարիքներով զարդարված լինեն ամենքիդ կյանքն ու ընտանեկան հարկերը, եւ հանապազ ձեզ հետ՝ Աստծո պահպանությունն ու օրհնությունները:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:

Ս. Պատարագի ավարտին կատարվեց Ջրօրհնեք, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը խաչով եւ սրբալույս մյուռոնով օրհնեց ջուրը: Խաչի այս տարվա կնքահայրն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերար, Միլանի (Իտալիա) հայ եկեղեցական վարչության ատենապետ Սարո Խուդավերդյանը:

Ջրօրհնեքի արարողության վերջում Վեհափառ Հայրապետը դարձյալ իր օրհնությունն ու սուրբծննդյան կենարար ավետիսը փոխանցեց ներկա հավատավոր ժողովրդին:

Սուրբծննդյան Ճրագալույցի Պատարագ Ս. Գայանե վանքում

Հունվարի 5-ին, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության բերկրալի տոնի առիթով, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը, առաջնորդությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ճրագալույցի ս. Պատարագին մասնակցեց Ս. Գայանե վանքում: Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին տոնի առիթով տարբեր երկրներից Հայաստան ժամանած Մայր Աթոռի բարերարներ եւ բազում ուխտավոր հայորդիներ:



Նախ կատարվեց Երեկոյան ժամերգություն, այնուհետեւ ընթերցվեցին սուրբգրային տարբեր հատվածներ, որից հետո Մայր Աթոռի չորս միաբան սարկավագներ ընթերցեցին Դանիելի մարգարեությունը:

Մատուցված Պատարագի ընթացքում պատարագիչ Մուշեղ սրբազանը քարոզեց Քրիստոսի սուրբծննդյան խորհրդի մասին՝ նշելով, որ ամբողջ աշխարհում բազմահազար մարդիկ այս պահին Բեթղեհեմի աստղի ուղեկցությամբ իրենց քայլերն ուղղում են դեպի սուրբ մսուր՝ այնտեղ ծնված Մանուկին եւ խաղաղություն բերող Թագավորին հոգով ու մտքով երկրպագելու համար:

«Իրապես, Հիսուսի ծնունդը, ինչպես որ Ավետարաններն են պատմում, մարդկային չափանիշներով գեղեցիկ ծնունդ չէ. ոչ մի մարդ այդպես ծնվել չէր ուզենա, ոչ մի ծնող իր զավակի ծնունդն այդպիսին տեսնել չէր երազի: Աստված, սակայն, տնօրինեց, որ Հիսուս այդ խղճուկ պայմանների մեջ ծնվի, պանդխտության մեջ ծնվի, ախոռի մեջ ծնվի եւ մսուրի մեջ դրվի: Աստված տնօրինեց, որ հրեշտակները երգեն եւ ավետեն այդ ծննդյան մասին, որպեսզի հետո տիեզերական երեւույթի վերածվի օծյալ Փրկչի՝ Հիսուսի ծնունդը:

Աստծո խոնարհումով տրված նորահրաշ այս Մանուկը, իրապես, պետք է թագավորեր աշխարհի վրա ոչ թե ժամանակի ընթացքում, այլ ժամանակից դուրս, ոչ թե տարածության մեջ, այլ տարածությունից վեր, մարդկանց մեջ, մարդկանց հոգիներում պիտի հաստատեր Իր արքայությունը եւ բնակվեր այնտեղ: Երկրային Իր գահը, որ պարզ մսուրն էր, Գողգոթայի բարձունքին փոխվեց խաչով, եւ հարությամբ վերստին ծնվելով, որպես նոր կյանքի սկիզբ, հարության խաղաղությունը թողեց մեզ. խաղաղություն, ուր չկան ցավ եւ հեծություն:

Աշխարհում խաղաղություն չտիրեց սակայն: Պատերազմները չդադարեցին: Այսօր էլ սպանում են, եւ սպանվում՝ վասն Քրիստոսի: Աստվածաստեղծ աշխարհը շարունակում է փոթորկվել, դեռ ընդդիմանում է սուրբծննդյան ավետիսով քարոզվող խաղաղությանը: Նվազում է փառաբանությունը Տիրոջ, պակասում են այն ընկալելու պատրաստակամությունն ու ցանկությունը: Հապա մարգարեն եւ իր խոսքը: Ո՞ւր է խաղաղությունը: Եղավ Ծնունդ, որ կյանք տվեց՝ կյանքեր խլելով, բայց եւ կյանքեր խլելով՝ կյանք պարգեւեց հավիտենականության մեջ: Այդ հավիտենականության մեջ Աստծո ներկայությունը վայելելու պարգեւն է այդքան բաղձալի խաղաղությունը: Այդժամ կդադարեն պատերազմները, եւ կհանդարտվեն դրանք հրահրողներն ու սերմանողները, քանի որ հոգու խաղաղությամբ է վաստակվում միայն տեսանելի, նյութական, շոշափելի խաղաղությունը»,– ընդգծեց սրբազանը՝ հաստատելով, որ Հիսուսը նաեւ աշխարհ եկավ, որպեսզի թողնի մարդկանց Իր խաղաղությունը եւ այն պահելու ընտրությունը:

Մուշեղ եպիսկոպոսը փաստեց, որ Քրիստոսը չի միջամտում մեր կյանքին, այլ թողնում է ազատ՝ իրագործելու աստվածային խաղաղության մեր ընկալումը, որ կարող ենք մոգերի պես երկրպագել եւ մեր ընծաները տալ, կարող ենք եւ Հերովդեսի պես մահ սփռել՝ անձնական ես-ն ու փառքը փրկելու ահից, կարող ենք սուր վերցնել եւ վնասել կամ ընտրել ունկ բուժելը Հիսուսի անունով:

«Անտարակույս, բոլորս էլ հավատում ենք, որ Նա է մեր Տերն ու Դատավորը..., սակայն ե՞րբ ենք լիովին կատարել Նրա կամքը, ե՞րբ ենք պահել Նրա պատվիրանները: «Մի՛ սպանիր»-ը... Սուր վերցնողը՝ սրով կընկնի, զգուշացնում էր Հիսուս եւ նոր պատվիրան տալիս՝ սիրեցե՛ք միմյանց:

Շարունակությունը՝ էջ 3

Ամանորի գիշերը կատարվեց Գոհաբանական մաղթանք եւ նռնօրհնեքի արարողություն

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ դեկտեմբերի 31-ին՝ ժամը 24:00-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ս. Տրդատի բաց խորանին, մայրաքաղաք Երեւանի բոլոր եկեղեցիներում եւ թեմերի առաջնորդանիստ եկեղեցիներում կատարվեց Գոհաբանական մաղթանք եւ նռնօրհնեքի արարողություն:

Մայր Աթոռում նռնօրհնեքի համար նախատեսված նուռը Սուրբ Էջմիածնին ընծայել էին Արցախի Հանրապետության իշխանությունները:

Հայկական ավանդության մեջ նուռը՝ իբրեւ ազգային խորհրդանիշ, կրում է կյանքի, ծաղկունքի եւ առատության իմաստ:

Քրիստոնեական խորհրդաբանության մեջ նուռը խորհրդապատկերն է մեր Տեր Հիսուս Քրիստոսի հեղած արյան՝ խորհրդանշելով նաեւ Նրա հրաշափառ հարությունն ու Աստծու շնորհների բազմազանությունը:

Հայոց Եկեղեցու վարդապետների եւ հայրերի մեկնություններում նուռը ներկայացվում է նաեւ այն խորհրդաբանությամբ, որ նռան հատիկների պես Եկեղեցու անդամները շատ ու բազմատեսակ են, սակայն պատված են նռան նման պինդ կեղեւով՝ միավորված լինելով մեկ Եկեղեցու մեջ: Այս պատճառով նռան խորհրդաբանությունը լայնորեն օգտագործվել է հայկական եկեղեցական ճարտարապետության, արվեստի եւ մանրանկարչության մեջ:

Սուրբծննդյան Ճրագալույցի Պատարագ Ս. Գայանե վանքում

Սկիզբը՝ էջ 2

Սիրելը խաղաղություն է: Սերն է ծնում խաղաղությունը, եւ այդ սիրով է հաստատվում խաղաղությունը: Սիրելով չենք կարող ձեռք բարձրացնել եւ կտրել մեր նմանի կյանքի թելը: Սիրելով կհաստատվի խաղաղությունը երկրի վրա, կկորչի չարությունը, եւ կշատանա հաճությունը մարդկանց մեջ: Դյուրին չէ սիրել, դյուրին չէ մոռանալ անձնական ես-ը եւ նախեւառաջ մտածել մեր մերձավորի մասին, առավել եւս սիրել թշնամուն: Բայց մեզ որպես օրինակ ունենք Քրիստոսին. Նա աշխարհ եկավ, դարձավ մեզանից մեկը եւ ապացուցեց, որ սիրո առաջ անհնարին բան չկա»,– ասաց սրբազան հայրը՝ հորդորելով հավատացյալներին պարզամիտ հովիվների եւ իմաստուն մոգերի նման բացել իրենց սրտերը, ընծայել իրենց ամենաթանկագին ընծաները, զոհել իրենց եսասիրությունը եւ երբեք հերովդեսներ, սուտ երկրպագողներ չլինել, որ իրենց մարմինները խոնարհում են Նրա առջեւ, բայց սրտերը՝ ո՛չ, չլինի թե միայն շրթունքներով օրհնեն փրկիչ Մանկանը եւ Փրկչի ծննդյան փոխարեն իրենց ես-ը փառաբանեն:

Պատարագի ավարտին՝ նախատոնակի ընթացքում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացավ սուրբ Խորան եւ վառեց կենսատու մոմը, որից Հիսուս Քրիստոսին խորհրդանշող լույսը բաշխվեց հավատացյալներին:

Այնուհետեւ Մայր Աթոռի միաբանությունը մեկտեղվեց Վեհարանում, ուր Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց տարվա առաջին Տնօրհնեքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց

27 դեկտեմբերի, 2019 թ.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանողական խորհրդի անդամներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանողական խորհրդի անդամներին:

Հանդիպմանը խորհրդի նախագահ Գեւորգ Հարությունյանը Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց համալսարանի կողմից իրականացվող ծրագրերի, միջբուհական համագործակցության եւ տարբեր ոլորտներում տարվող աշխատանքների մասին՝ ընդգծելով, որ խորհրդի առաքելության կարեւորագույն ուղղություններից է նաեւ գործակցությունը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հետ:

Այնուհետեւ երիտասարդներին իր հայրական օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ շնորհավորելով նաեւ գալիք Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առիթով: Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունն արտահայտեց ուսանողների՝ Մայր Աթոռ այցելության կապակցությամբ՝ նշելով, որ այս սրբավայրում նրանց հնարավորություն է ընձեռվում ճանաչելու եւ հաղորդակցվելու իրենց հայրերի հոգեւոր ժառանգությանը, հերոսական ոգուն, մշակույթին ու ազգային արժեքներին, զորացնելու իրենց հավատքը եւ ներշնչվելու նոր արարումների համար:

Հայոց Հովվապետը գովեց երիտասարդների հայրենասիրական ոգին եւ նախանձախնդրությունը հայրերի հավատքի հանդեպ՝ ընդգծելով, որ այդպիսի գիտակցությամբ առաջնորդվող սերունդը պիտի կարողանա իրականություն դարձնել մեր ժողովրդի իղձերը, կերտել հայրենիքի անվտանգ ու խաղաղ կյանքը: Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ այսօր առկա է պայծառ մտքի տեր քաջասիրտ, լուսավոր սերունդ՝ նախանձախնդիր իր հայրենի երկրի շինության եւ հզորության գործում: Նորին Սրբությունը պատգամեց երիտասարդներին հետեւել իրենց կրթությանը, որպեսզի կարողանան ձեռք բերած գիտելիքները լավագույնս ծառայեցնել ազգին եւ հայրենիքին:

Նորին Սրբությունը հորդորեց ուսանողներին իրենց աչքի առջեւ իբրեւ օրինակ ունենալ Հայաստանի եւ Արցախի քաջարի հերոսներին եւ մշտապես ոգեշնչվել նրանց սխրանքներով՝ հաղթահարելու կյանքի դժվարություններն ու փորձությունները:

Վեհափառ Հայրապետը նաեւ կարեւորեց ուսանողների կապը Հայոց Եկեղեցու հետ եւ նրանց գործուն ներգրավվածությունը Եկեղեցու հովանու ներքո գործող երիտասարդական կառույցներում եւ միություններում, ինչը մեծապես պիտի նպաստի նրանց հոգեւոր կյանքի առաջընթացին: «*Սուրբ Էջմիածինը ազգի տունն է*»,– ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հորդորելով հայորդիներին հաճախ իրենց քայլերն ուղղել դեպի Մայր Աթոռ՝ հայոց հավատի եւ ազգային արժեքների գանձարանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց Մայր Աթոռի պաշտոնեությանը

Հունվարի 8-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վեհարանի հանդիսությունների դահլիճում Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առիթով հանդիպում ունեցավ Մայր Աթոռի տարբեր կառույցներում պաշտոնավարող աշխարհական աշխատակիցների հետ:

Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը ներկաների անունից շնորհավորեց Նորին Սրբությանը՝ բերկրալի տոների առիթով եւ ընդգծեց, որ Մայր Աթոռի պաշտոնեությունը՝ իբրեւ մեկ մեծ ընտանիք, ի գլուխ ունենալով Ամենայն Հայոց Հայրապետին, պատրաստակամ է շարունակելու իր արդյունավետ ծառայությունը բերել ի նպաստ Սուրբ Էջմիածնի սրբազան առաքելության:

Պաշտոնեության անունից Վեհափառ Հայրապետին նաեւ շնորհավորական խոսք ուղղեց Մայր Աթոռի հովանու ներքո գործող «Քյուրքչյան» երեխաների աջակցության կենտրոնի տնօրեն Արամ Մկրտչյանը:

Այնուհետեւ ներկաներին տարեսկզբի իր հայրապետական օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հայոց Հայրապետը, շնորհավորելով աշխարհական աշխատակիցներին՝ տոների առիթով, իր շնորհակալությունն ու գնահատանքը հայտնեց նրանց՝ պարտականությունները նախանձախնդրորեն, սիրով եւ հանձնառությամբ իրականացնելու համար, ինչի շնորհիվ Հայոց Եկեղեցին կարողանում է առավել արդյունավետ կերպով իրագործել իր ծառայությունը հայ ժողովրդի կյանքում: Նորին Սրբությունը հաստատեց, որ անցած տարում Մայր Աթոռի կողմից արձանագրված հաջողությունների ու ձեռքբերումների մեջ իր կարեւոր բաժինն ունի աշխարհիկ պաշտոնեությունը: «*Ձեր աշխատանքը միայն առանձին անձանց չէ, որ ուրախություն ու գոհունակություն է պատճառում: Ձեր աշխատանքի արդյունքը բերկրանք է պատճառում մեր ողջ ժողովրդին, որովհետեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ազգի նվիրական սուրբ տունն է, հոգեւոր հաստատությունը: Եվ այս հաստատության բարեշեն եւ պայծառ լինելը ուրախություն է թե՛ Հայաստանում եւ թե՛ Սփյուռքում ապրող յուրաքանչյուր հայորդու համար*»,– ասաց Հայոց Հայրապետը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ի մասնավորի անդրադարձ կատարեց 2020 թվականի ծրագրերին՝ առանձնացնելով հավատացելոց կյանքում եկեղեցական առաքելության զորացմանն ուղղված նախաձեռնությունները, Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը եւ Մայր տաճարի հիմնանորոգությունն ու վերաբացումը:

Խոսելով հոգեւոր կյանքի զորացման կարեւորության մասին՝ Նորին Սրբությունն ընդգծեց. «*Ապրել Աստծո հետ նշանակում է կյանքն ապրել սիրո եւ բարության մեջ: Ապրել Աստծո հետ նշանակում է ապրել առաջընթաց եւ բարօր կյանքով*»:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի աշխատակիցներին մաղթեց քաջառողջություն, երջանկություն եւ արեւշատ կյանքի երկար տարիներ: Հայոց Հայրապետը հայցեց, որ Տիրոջ Սուրբ Աջը եւ սուրբծննդյան առատ շնորհները միշտ հովանի լինեն հայորդիներին եւ նրանց ընտանիքներին՝ խաղաղության եւ բարօրության մեջ պահելով հայրենիքը եւ ողջ աշխարհը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն Արմավիրի թեմի առաջնորդին հանձնեց արքության դասվի սրբատառ կոնդակը

Դեկտեմբերի 29-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն արք. Ադամյանին՝ հանձնելու արքության պատվի հայրապետական սրբատառ կոնդակը: Դեռ 2019 թ. փետրվարի 26-ին՝ Ս. Ղեւոնդյանց քահանաների տոնին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից սրբազանին շնորհվել էր արքության պատիվ՝ ի գնահատություն Հայոց Եկեղեցու անդաստանում բազմամյա ծառայության:

Հանդիպմանը ներկա էին Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթեւոսյանը, Արմավիրի թեմի թեմական խորհրդի ատենապետ Տիգրան Հովհաննիսյանը, թեմի հոգեւոր սպասավորները, մարզային ու քաղաքային իշխանությունների եւ թեմի տարբեր համայնքների ներկայացուցիչներ:

Ուրախությամբ ողջունելով արարողության մասնակիցներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ամենքին բերեց իր օրհնությունն ու բարեմաղթանքները: «*Մեզ համար կարեւոր նշանակություն ունի, որ մեր Եկեղեցու սպասավորը՝ պարզ հոգեւոր հովիվ թե առաջնորդ, սիրված եւ հարգված լինի հավատացելոց կողմից*»,– ասաց Վեհափառ Հայրապետը՝ գոհունակություն հայտնելով սրբազանի շուրջը համախմբված բազում հայորդիների տեսնելով:

Նորին Սրբությունն աղոթքով մաղթեց, որ Տերը զորացնի Սիոն արքեպիսկոպոսին իր առաքելության մեջ՝ շարունակելով արդյունավոր ծառայությունը՝ հանուն թեմի զորացման եւ հայրենիքի պայծառության:

Այնուհետեւ Մայր Աթոռի դիվանատան ներեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Պարույր քհն. Ավետիսյանն ընթերցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը:

«*Սիրելի՛ Սրբազան, ավելի քան երեք տասնամյակ Դուք, որպես ուխտյալ զինավորն Քրիստոսի, ամենայն պատրաստակամությամբ Ձեր կարողությունները ծառայեցնում եք Առաքելական մեր Ս. Եկեղեցու տիրավանդ առաքելության արդյունավորմանը: Ձեր քահանայագործության առաջին քայլերը Դուք կատարել եք Արարատյան հայրապետական թեմում, ապա երկար տարիներ արդյունավորությամբ հովվել Վառնայի հավատավոր հայ համայնքը՝ արթուն սպասավորությամբ ջանքեր ներդնելով, որ ամրանա հայորդյաց համայնքային կյանքը, զորանա մեր ժողովրդի զավակների կապը մեր Եկեղեցու հետ, եւ նոր սերունդի հոգիներում արմատավորվի հոգեւոր ու ազգային ինքնագիտակցությունը:*

Մենք Ձեզ ծառայության կոչեցինք Գեղարքունյաց թեմում, ապա Ձեզ վստահեցինք Արմավիրի թեմի առաջնորդի պատասխանատու պաշտոնը՝ բարի սպասումով, որ հայրենական ու սփյուռքյան ծառայության փորձառությամբ պիտի շարունակեք նոր հաջողություններով արդյունավորել Ձեր գործունեությունը եւ ավանդ բերել մեր Եկեղեցու պայծառությանը: Այսօր ուրախ ենք հաստատելու, որ այս տարիների ընթացքում կարելին ի սպաս եք բերել՝ շենացնելու Արմավիրի թեմը, առավել արդյունավոր դարձնելու հոգեւորականաց գործունեությունը քաղաքներում ու գյուղերում՝ ի նպաստ մեր ժողովրդի զավակների հոգեւոր կյանքի վերազարթոնքի»,– ասված է հայրապետական կոնդակում:

Հայրապետական կոնդակը փոխանցելուց հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սիոն սրբազանին շնորհեց ձեռաց խաչ:

Այնուհետեւ Արմավիրի թեմի առաջնորդն իր խորին շնորհակալությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ մեծ պատվի համար, նշելով, որ այդ վստակը նա կիսում է թեմի յուրաքանչյուր անդամի հետ, քանի որ հոգեւորական եւ աշխարհական լծակից հայորդիների շնորհիվ են թեմական կյանքում արձանագրվել բազում հաջողություններ եւ ձեռքբերումներ: Սրբազանն ընդգծեց, որ հոգեւոր ծառայությունն անվերջ է եւ շարունակական, ուստի առավել մեծ խանդավառությամբ պիտի շարունակի իր ծառայությունը բերել Հայոց Եկեղեցուն:

Սիոն արքեպիսկոպոսը նաեւ իր շնորհակալությունը հայտնեց Արմավիրի մարզային եւ քաղաքային իշխանություններին՝ թեմին եւ հոգեւոր սպասավորներին ցուցաբերվող զորակցության համար:

Շնորհավորական խոսքով հանդես եկավ նաեւ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթեւոսյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց հայորդյաց տների՝ 2019 թ. մրցանակակիր սաներին

Նորին Սրբությունը փառք տվեց Աստծուն՝ հայորդյաց տների բազմամյա արդյունավոր գործունեության համար, որի շնորհիվ հազարավոր երեխաներ ոչ միայն իրենց ձիրքերն ու տաղանդները կատարելագործեցին, այլեւ քրիստոնեական կրթություն ու դաստիարակություն ստացան՝ դառնալով ազգի արժանավոր զավակներ եւ առատացնելով ազգային կյանքի բարիքները: Վեհափառը հայորդյաց տների որպես հիմնություն հայտնելով, որ Հայոց Եկեղեցին իր լուման է ներդրել նրանց անձերի ձեւավորման գործում:

Այս առնչությամբ Նորին Սրբությունը կատարվող ժրաջան աշխատանքի համար իր բարձր գնահատանքը բերեց հոգեւոր տեսուչ սրբազանին, տնօրեններին եւ մանկավարժներին, ապա վստահություն հայտնեց, որ նրանց հոգատար խնամքի ներքո հայորդյաց տները պիտի զորանան՝ տարեցտարի ավելացնելով սաների թիվը:



Հունվարի 10-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վեհարանի հանդիսությունների դահլիճում հանդիպեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ՀԲԸՄ-ի հովանու ներքո գործող 7 հայորդյաց տների տարբեր դասարանների եւ մանրանկարչության կենտրոնի սաներին՝ ուղեկցությամբ հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Վարդան եպս Նավասարդյանի, հայորդյաց տների տնօրենների ու մանկավարժների:

Հայորդյաց տների ծրագիրը, որ մեկնարկել է 1993 թվականին՝ նախաձեռնությամբ այն ժամանակ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանի եւ աջակցությամբ ՀԲԸՄ-ի նախագահ տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնի, ընդարձակվելով այսօր Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ-ի հովանու ներքո շարունակում է գործել Երեւան, Էջմիածին, Գյումրի, Վանաձոր եւ Աշտարակ քաղաքներում: Արտադպրոցական կրթության այս կենտրոններում երեխաները հնարավորություն են ստանում մասնակցելու արվեստների ու արհեստների, սպորտաձեւերի եւ այլ մասնագիտական խմբակներին՝ ստանալով հիմնավոր կրթություն: Մասնավոր ուշադրություն է դարձվում սաների հոգեւոր դաստիարակությանը եւ ազգային նկարագրի կերտմանը:

Հայորդյաց տներ հաճախող շուրջ չորս հազար երեխայից ու պատանուց հանդիպմանը ներկա էր 2019 թվականին ներհայաստանյան եւ միջազգային տարբեր փառատոներում, մրցույթներում, ցուցահանդեսներում եւ մրցաշարերում մրցանակային տեղեր գրաված 289 սան:

Հաջողություններ արձանագրած աշակերտները Մայր Աթոռ Ս. Էջմիածին էին այցելել՝ ստանալու Նորին Սրբության օրհնությունն ու Տեր Հիսուս Քրիստոսի սուրբծննդյան բարի ավետիսը:

Հանդիպումն սկսվեց Վարդան սրբազանի ողջույնի խոսքով: Սրբազանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց հայորդյաց տների անցյալ տարվա հաջողությունները՝ ի մասնավորի անդրադառնալով տարբեր ոլորտներում սաների նվաճումներին:

Ուրախությամբ ողջունելով հայորդյաց տների սաներին՝ Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունը, շնորհավորանքներն ու բարձր գնահատանքը բերեց նրանց եւ մանկավարժներին՝ անցյալ տարի արձանագրված հաղթանակների կապակցությամբ: Նորին Սրբությունը մաղթեց նույն խանդավառությամբ, հաղթական ոգով ու տրամադրությամբ շարունակել ուսումնական գործընթացը հայորդյաց տների հարկի ներքո եւ նորանոր հաջողություններ արձանագրել՝ ուրախություն պատճառելով ծնողներին, մանկավարժներին, հայորդյաց տների պատասխանատուներին եւ Հայոց Հայրապետին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթքով հիշեց հայորդյաց տների ծրագրի ակունքներում կանգնած ՀԲԸՄ-ի նախագահ լուսահոգի տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնին, որի հովանավորությամբ, իբրեւ առ հայրենին եւ առ մեր ժողովուրդը ունեցած սիրո արտահայտություն, կյանքի կոչվեց ծրագիրը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն աղոթքով հայցեց, որ Աստծո օրհնության ներքո մանուկները հասակ առնեն, զորանան՝ իրականության առաջնորդելով իրենց եւ նաեւ իրենց ծնողների իղձերն ու երազները՝ հայորդյաց տներում ուսումնառության տարիները ամուր պատվանդան դարձնելով իրենց կյանքի հետագա հաջողությունների համար:

Այնուհետեւ ներկաները Հայրապետական մաղթերգի կատարմամբ աղոթեցին Ամենայն Հայոց Հայրապետի կենաց արեւշատության եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության համար, ապա Գարեգին Երկրորդ Կաթողիկոսին Տիրոջ Սուրբ Ծննդյան տոնի առիթով ընծայեցին իրենց ձեռագործ աշխատանքները:

Այց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ Բաքվի եւ Սումգայիթի ջարդերի 30-րդ տարելիցի առիթով

Հունվարի 13-ի առավոտյան Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի հետ միասին հարգանքի տուրք մատուցեց Բաքվում եւ Սումգայիթում իրականացված հայերի ջարդերի 30-րդ տարելիցի առիթով:

Ամենայն Հայոց Հայրապետը Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանի, Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանի եւ վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանի հետ աղոթեց ջարդերի զոհերի հոգիների հանգստության համար, ապա ծաղիկներ դրեց նրանց հիշատակին կանգնեցված հուշարձաններին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը Ղազախստանի Հանրապետության նախագահին

Դեկտեմբերի 27-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել Ղազախստանի Հանրապետության նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւին՝ Ալմաթիի մերձակայքում մարդատար ինքնաթիռի վթարի առնչությամբ:

«*Հայ ժողովրդի անունից Մեր սրտագին ցավակցությունն ենք հայտնում Ձերդ գերազանցությանը, ողբերգության զոհերի ընտանիքներին եւ Ղազախստանի եղբայրական ողջ ժողովրդին:*

Հայցում ենք Բարձրյալին խաղաղության մեջ հանգչեցնել զոհվածների հոգիները եւ մխիթարություն պարգեւել նրանց հարազատներին ու մտերիմներին»,– նշել է Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով, որ Ղազախստանի բարեսեր ժողովուրդը զերծ մնա նման ողբերգություններից եւ ապրի խաղաղ ու անվտանգ կյանքով:

Թանգարան Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու վարչական շենքում

Դեկտեմբերի 23-ին՝ Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցու վարչական շենքում, նախաձեռնությամբ հնդկահայոց հոգեւոր հովիվ եւ Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ. Մովսես վրդ. Սարգսյանի եւ աջակցությամբ եկեղեցական վարչության, բացվեց նոր թանգարան, ուր ցուցադրվում են եկեղեցական սպասք եւ տարբեր իրեր, հայրապետական կոնդակներ, հնատիպ գրքեր եւ պատմական լուսանկարներ:

Նորաբաց թանգարանի ստեղծման գաղափարի հեղինակը հայր Մովսեսն է, որը 2016 թ. սկսել է խնամքով հավաքել, նորոգել եւ մեկտեղել բոլոր ցուցանմուշները: Թանգարանը հրաշալի հնարավորություն է ընձեռում հնդկահայերին եւ եկեղեցու այցելուներին՝ ծանոթանալու հնդկահայ գաղութի հետաքրքիր պատմությանը:

Բացման պատիվը տրվեց այդ օրերին հյուրաբար Կալկաթայում գտնվող Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ՔԴԿ տնօրեն Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանին: Բացմանը մասնակցում էին Ս. Նազարեթ եկեղեցու վարչության փոխատենապետեր Սյուզան Ռուբենը եւ Սունիլ Սոբթին, վարչության անդամներ, հնդկահայեր, ճեմարանի ուսուցիչներ, աշակերտներ եւ հյուրեր:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների հետեւյալ նշանակումները:

Պարգեւների շնորհման եւ կարգապահական հարցերի հանձնախմբի ատենապետ Ոսկան արք. Գալփակյանի փոխարեն ատենապետ է նշանակվել Նաթան արք. Հովհաննիսյանը:

Հայրապետական տնօրինությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ստեղծված քարոզչական կենտրոնի տնօրեն է նշանակվել (2020 թ. հունվարի 1-ից) Գարեգին վրդ. Համբարձումյանը՝ ազատվելով Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսչի պաշտոնից:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ է նշանակվել Մեսրոպ վրդ. Պարսամյանը՝ ազատվելով ԱՄՆ հայոց արեւելյան թեմում ստանձնած հոգեւոր պարտականություններից:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՀԱԿԱՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ՇՈՒՐՋ

Պատմական սկզբնաղբյուրների համաձայն՝ Ընդհանրական եկեղեցին ընդունում է Նիկիայի (325 թ.), Կ. Պոլսի (381 թ.) եւ Եփեսոսի (431 թ.) տիեզերաժողովների հաստատած դավանաբանական բանաձեւումներն ու կանոնական որոշումները: Որոշ ժամանակ անց, Եվտիքեսի հերձվածողական վարդապետության պատճառով, գումարվում է Քաղկեդոնի 451 թ. տիեզերաժողովը:

Քաղկեդոնի ժողովում ընդունված դավանաբանական սահմանումը՝ «երկու բնություն եւ մի դեմք», պառակտում է Ընդհանրական Եկեղեցին: Հակառակ Նիկիայի, Կ. Պոլսի եւ Եփեսոսի տիեզերաժողովների որոշումների՝ Քաղկեդոնի ժողովում ընդունվում է երկաբնակությունը: Ժողովի դավանաբանական բանաձեւի հիմքում Հռոմի Լեւոն Ա պապի (440–461 թթ.)՝ Կ. Պոլսի Փլաբիանոս պատրիարքին (447–449 թթ.) հասցեագրված դավանաբանական գրվածքն էր (շարադրվել է 449 թ. հունիսի 13-ին՝ ընդդեմ Եվտիքեսի վարդապետության): Եկեղեցու պատմության մեջ այս վավերագիրը հայտնի է «Tomos Leonis» («Լեւոնի տումար (կամ՝ տոմար)» (*տե՛ս «Սկզբնագիրք տումարի սրբոյն Լեւոնի եւ սահմանք սուրբ ժողովոյն Քաղկեդոնի», ի Վէնէտիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 1805*) անվամբ:

Արեւելյան միաբնակ Եկեղեցիները, մերժելով երկաբնակությունը, հիմնավորում են դավանաբանական սեփական դիրքորոշումը՝ «մի՛ է բնութիւն Բանին մարմնացելոյ» (*տե՛ս «Գիրք որ կոչի Ընդհանրական. արարեալ սրբազնասուրբ հայրապետին մերոյ՝ տեառն Ներսէսի Շնորհալւոյ», Սանկտ Պետերբուրգ, 1788, էջ 142*): Ըստ էության՝ Քաղկեդոնի 451 թ. տիեզերաժողովում ընդունվում է դավանաբանական այն սահմանումը, որը նզովել էին Կյուրեղ Ալեքսանդրացին (եկեղեցական նշանավոր հայր, Ալեքսանդրյան աստվածաբանական դպրոցի ակնառու ներկայացուցիչ, Ալեքսանդրիայի պատրիարք 412–444 թթ.) ու Եփեսոսի ժողովի մասնակից հայրերը. *«Եթէ ոք զմի Քրիստոսն բաժանեսցէ յերկուս երեսս յետ միանալոյն, եւ միայն մերձաւորութիւն եւ պատիւ եւ ճոխութիւն տացէ նմա եւ ոչ միութիւն բնութեամբ, նզովեսցի»* (*«Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ Եկեղեցւոյ յուղղափառ եւ սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց. յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի (613–627) համահաւաքեալ», աշխ.՝ Կ. եպս Տէր-Մկրտչեանի, Ս. Էջմիածին, 1914, էջ 232*):

> **Արեւելյան միաբնակ Եկեղեցիները, մերժելով երկաբնակությունը, հիմնավորում են դավանաբանական սեփական դիրքորոշումը՝ «մի՛ է բնութիւն Բանին մարմնացելոյ»** (*տե՛ս «Գիրք որ կոչի Ընդհանրական. արարեալ սրբազնասուրբ հայրապետին մերոյ՝ տեառն Ներսէսի Շնորհալւոյ», Ս. Պետերբուրգ, 1788, էջ 142*):

Քաղկեդոնի ժողովը հրավիրվում է Մարկիանոս (Փլավիոս Մարկիանոս՝ 450–457 թթ. Արեւելյան Հռոմեական կայսրության տիրակալ) կայսեր ջանքերով. վերջինս տիեզերաժողովի որոշումների հաստատումից հետո ճնշում է ցանկացած ընդդիմություն, եւ միաբնակության պաշտպանները ենթարկվում են դաժան հալածանքների:

Գյուտ Ա Արահեզացի կաթողիկոսի (461–478 թթ.) վախճանից հետո՝ 478 թ., Հայոց հայրապետ է ընտրվում նրա եղբորորդի եւ օգնական Հովհան Ա Մանդակունին (478–490 թթ.): Հայրապետության առաջին տարիներին Հովհան Ա Մանդակունին չի կարողանում զբաղվել հոգեւոր խնդիրներով, եկեղեցական բարեկարգություններով, քանի որ Հայոց աշխարհը գտնվում էր պատերազմական իրավիճակում:

485 թ. Վահան Մամիկոնյանը դառնում է Հայոց մարզպան, եւ երկրում հարաբերական անդորր է հաստատվում. Հայ Եկեղեցին հնարավորություն է ստանում հիմնավորելու դավանաբանական սեփական դիրքորոշումը՝ մերժելով Քաղկեդոնի ժողովի ընդունած երկաբնակությունն ու «Լեւոնի տոմարը»: Վերոնկարագրյալ շրջանին է վերագրվում «Երանելոյն Յովհաննու (Հայոց) եպիսկոպոսապետի, Ապացոյց յերկուց բնութեանց ասել զՓրկիչն եւ կամ մի բնութիւն» հակաքաղկեդոնական գրվածքը (*տե՛ս «Գիրք թղթոց», Բ հրատ., Երուսաղէմ, 1994, էջ 128–143*), որը, իբրեւ Հայ Եկեղեցու քրիստոսաբանական դիրքորոշումը հաստատող դավանաբանական կարեւորագույն վավերագիր, ընդգրկվել է «Գիրք թղթոց» ժողովածուում: Այս գրվածքից մի ամբողջական հատված՝ «Երանելոյն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթուղիկոսի՝ ի հակաճառութենէն Քաղկեդովնի ժողովոյն, որ ասի Ապացոյց» վերնագրով, վկայաբերված է «Կնիք հաւատոյ» դավանաբանական ժողովածուում (*տե՛ս «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ յուղղափառ եւ սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց….», էջ 130–133*):

«Կնիք հաւատոյ» դավանաբանական ժողովածուում՝ այս գրվածքի վերնագրում, հստակ հիշատակվում է Հովհան Մանդակունու անունը:

Շարունակությունը՝ էջ 6

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ծննդյան 200–ամյակին ընդառաջ (1820–1901)

Սկիզբը՝ 2019-ի թիվ 22–24

Ալիշան բանաստեղծը. «Երգք Նահապետի» շարքը

Ղ. Ալիշանի կողմից իր հոգեւոր «երկվորյակ» Նահապետին 17-րդ դար տեղափոխելը մեկ այլ հիմնապատճառ եւս ուներ: Սեֆյան Պարսկաստանի եւ Օսմանյան Թուրքիայի բախումների հետեւանքով Հայաստանն առանձնապես տկարացել էր, իսկ Շահ-Աբաս Ի-ի (1587–1629) գահակալության ժամանակ ու նրա արշավանքների հետեւանքով՝ գրեթե անապատացել: Թուրքական բանակի հետապնդումներից խուսափելով՝ Հայաստանով դեպի իր երկիրը՝ Պարսկաստան հեռացող Շահ-Աբասը թշնամուն պարենազրկելու եւ սովի մատնելու համար կողոպտել, այրել ու ամայացրել էր ճանապարհի հայկական բնակավայրերն ու ոչնչացրել ամեն ինչ եւ մի քանի հարյուր հազար հայերի, նույնիսկ Հին Ջուղայի բնակիչներին, որ նրան փառահեղ ընդունելության էին արժանացրել ու պատվել մեծարժեք նվերներով, բռնի գերեվարեց Պարսկաստան, որպեսզի հայերի աշխարհաշեն աշխատանքով զարգացնի իր երկրի տնտեսությունն ու բարձրացնի բնակչության բարեկեցությունը:

Իր ողջ պատմության ընթացքում Հայաստանին ու հայությանը պատահած ծանրագույն աղետներից մեկն էր սա, որի մանրամասները հստակ գիտեր Ղ. Ալիշանը: Նրա «երկվորյակ» Նահապետը, որն իբր «ապրել» էր պարսից արքայի՝ հայերի համար հատկապես ողբերգական այդ ժամանակներում, հին եւ միջնադարյան ողբերի օրինակով պիտի հյուսեր «Ողբամ զքեզ, Հայո՛ց աշխարհ», «Հայոց աշխարհիկ», «Հայ հայրենիք», «Լուսնկայն գերեզմանաց Հայոց» եւ մյուս բանաստեղծությունները, հնչեցներ ծանր կորուստների դիմաց արդար հատուցման ու վրեժի ռազմերգերը՝ հանրության լայն շրջաններին, «ազգին կտրճաց եւ տղոց» մատչելի ռամկերենով:

Ինչպես ակադ. Էդ. Ջրբաշյանն է նկատել, շարքի 11 մեծ ու փոքր բանաստեղծություններն ունեն ներքին բովանդակային, գաղափարական, քնարական ու ոճական միասնություն, եւ դրանք միմյանց շաղկապողը, մեկ շարքի մեջ միավորողը հենց Նահապետն է՝ իդեալականացված մի երգիչ, «հայոց դաշտերի Հոմերոսը կամ Վերգիլիոսը», որի կերպարն այնքա՛ն ջերմությամբ ու խանդաղատանքով հյուսել է հեղինակը: Դեռ 1847 թ. «Հայոց աշխարհիկ» քերթվածի պարզաբանում-ծանոթագրության մեջ նա գրել է. «...Հայո՛ց աշխարհիկ, երնե՛կ քեզ, որ այնչափ պարծանքներուդ հետ՝ աս Նահապետն ալ բերիր քու վերջին դարերուդ, որ գործքով իր անունը ճշմարտեր է, եւ ազգին կտրճներուն ու տղոց մեջ իր ազգին փառավոր ու տխուր դիպվածոց վրա՝ բնութենե սորված երգեր հյուսելով պզտկուց կարդացած կամ լսած պատմությանցը վրա, ասոնցով իր խաղաղ ծերությամբը աչվըներուն լույսը պակսեցուցած՝ մտքինը սրված՝ տեսությունները կարծես ինչվան մեր օրերեն ալ հեռուն կը հասցնե»:

Ղ. Ալիշան–Նահապետը նոր հայացք է դրսեւորել, հայոց պատմությունը դիտել է նոր ժամանակների տեսանկյունից եւ այն շաղկապել ներկա իրականությանը: Նահապետի անունով հրատարակված այդ բանաստեղծություններում Ալիշանը կարծես ջանացել է ջնջել ներկայի եւ անցյալի սահմանները՝ նախնիներին ներկա եւ իրեն անցյալ տեղափոխելով, որպեսզի նոր ժամանակների հայ մարդը կարողանա ճանաչել ու արժեւորել մեր պատմական հայրենիքը եւ տոգորվել մեր հերոս նախնիների անձնազոհ հայրենասիրության ոգով: Եվ դա արել է բանաստեղծական հզոր տաղանդով ու բարձր արվեստով, այնպիսի նվիրվածությամբ, որ արժեւորվել ու գնահատվել է նախ ժամանակակիցների կողմից:

19-րդ դ. հայ գրականությունը՝ արձակ եւ չափածո վիպասանությունը արժեւորելիս քննադատ Մ. Նալբանդյանը «Կրիտիկա. «Սոս եւ Վարդիթեր»» աշխատության էջերում եւ տողատակի ծանոթագրություններում Խ. Աբովյանի եւ Պ. Պռոշյանի հետ միասին բարձր է գնահատել նաեւ Նահապետ–Ալիշանին: Մ. Նալբանդյանի համոզմամբ՝ Աբովյանն ու Պռոշյանը հիմք էին դրել «արդյան ազգային վիպասանության», իսկ Ղ. Ալիշանի մասին մասնավորաբար գրել է. «Չենք մոռացած «Նահապետ» ստորագրությամբ Հ. Ղեւոնդ Ալիշանյանց արժանավոր վարդապետի հրատարակած հոյակապ քերթվածները – «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհիկ» եւ մյուս բոլոր հոյակապ ոտանավորքը. բայց այստեղ չհիշեցինք, որովհետեւ արձակ բանաստեղծության վրա էր մեր խոսքը. ապա թե ոչ, չափաբերական քերթվածոց մեջ արժանավոր վարդապետը ախոյան (մրցակից) չունի. եթե մենք լռենք, Ավարայրի բլբուլը կխոսի. ...«Կանչե՛ պլպուլիկ, կանչե՛ հոգեձայն. արդյոք զուխտ մահվան սուրբ հիշե՞ Վարդան» (*Մ. Նալբանդյան, Երկեր, Հայ դասականների գրադարան, Եր., 1985, էջ 524*):

Իսկապես էլ, հեռավոր Վենետիկում գրված տաղերը «արծվի թեւերով» (Դ. Վարուժանի բնորոշումն է) հասան մայր երկիր, մտան հայկական տուն ու դպրոց, թափանցեցին հայ մարդկանց սրտերը, զորացրին ու ջերմացրին նրանց հայրենիքի սիրով:

XIX դ. այն ժամանակահատվածը (1847–1858 թթ.), երբ Ղ. Ալիշանը գրում էր իր բանաստեղծությունները, դեռեւս հրատարակված չէր Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի», եւ անկում ապրող հայկական կլասիցիզմը վերջին ճիգերն էր անում: Ղ. Ալիշանը նույնպես մի որոշ շրջան գտնվում էր կլասիցիզմի գեղագիտության շրջանակներում: Սակայն նա քաջություն ունեցավ հակադրվելու իր ուսուցիչ Ա. Բագրատունուն եւ Մխիթարյան մյուս երեւելի բանաստեղծներին: Նա բոլորից անկախ հանդես եկավ ստեղծագործական նոր ծրագրով ու հաստատեց ռոմանտիզմի իրավունքները հայ գրականության մեջ: Չեն սխալվում այն գրականագետները, որոնք նրան նույնպես՝ Խ. Աբովյանի հետ միասին, հայ նոր գրականության հիմնադիր են համարում:

Շարունակությունը՝ էջ 7

ՀԱԿԱՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ՇՈՒՐՋ

Սկիզբը՝ էջ 5

Սակայն ինչպես վերջինիս անվամբ հայտնի՝ 26 ճառից կազմված ժողովածուի (*«Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի Ճառք», Ա հրատ., ի Վենետիկ, 1836, Բ հրատ., ի Վենետիկ, 1860. հմմտ. Յովհան Մանդակունի, Ճառք, «Մատենագիրք Հայոց», Ե դար, հտ. Ա, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1159–1278*), այնպես եւ դավանաբանական նշյալ վավերագրի հեղինակային պատկանելության հարցը վիճելի է: Այժմ որոշ վկայությունների հիմամբ հաստատվել է, որ Հովհաննես Բ (Ա) Ալեքսանդրացին է (Ալեքսանդրիայի պատրիարք 496–505 թթ.) դավանաբանական այս փաստաթղթի հեղինակը, եւ նշյալ գրվածքը թարգմանվել է հունարեն բնագրից եւ թյուրիմացաբար վերագրվել Հովհան Ա Մանդակունուն *(այս մասին տես **Ն. եպս Պողարեան**, Հայ գրողներ (Ե–ԺԷ դար), Երուսաղէմ, 1971, էջ 32*): Ուղղափառ եկեղեցին հիշատակում է Հովհաննես Բ, իսկ Ղպտի եկեղեցին՝ Հովհաննես Ա Ալեքսանդրացի, քանի որ չի ընդունում նրա նախորդին՝ Հովհաննես Ա-ին՝ քաղկեդոնական լինելու պատճառով:

Սույն խնդրին անդրադարձել են նաեւ Ն. Ակինյանն ու Պ. Տեր-Պողոսյանը (*տես **Հ. Ն. Ակինեան**, **Հ. Պ. Տէր-Պողոսեան**, Մատենագրական հետազօտութիւններ. Յովհաննէս Ա Կաթողիկոս Հայոց (Մանդակունի. 480–502), «Հանդէս ամսօրեայ», թիւ 4–6, 1971, էջ 142*): Ուսումնասիրողները հիմնավորել են, որ նշյալ վավերագիրը պարզապես ենթադրաբար է վերագրվել Հովհան Ա Մանդակունուն, այնինչ Վրթանես Քերթողի «Պատճառք Դ ժողովոյն երկաբնակացն» շրջաբերականում (*ըստ Ն. Ակինյանի՝ այս շրջաբերականը Մովսես Յուրտավեցի եպիսկոպոսի անվամբ է հիշատակվում «Գիրք թղթոց»-ում, սակայն իրականում այն Վրթանես Քերթողի գործն է. հմմտ. **Հ. Ն. Ակինեան**, Կիւրիոն, Վիեննա, 1909, էջ 213, ծնթ. 2*) դավանաբանական այս փաստաթուղթը հիշատակվում է որպես ոչ հայ հեղինակի գրվածք (*տես **Հ. Ն. Ակինեան**, **Հ. Պ. Տէր-Պողոսեան**, Մատենագրական հետազօտութիւններ...., էջ 142*): Իսկ Անաստաս թագավորին վերագրված «Թուղթ զոր արար Անաստաս թագաւորն ընդդէմ ամենայն հերձուածողաց» (*տես «Գիրք թղթոց», էջ 277*) գրվածքում խնդրո առարկա վավերագիրը հիշատակվում է այսպես՝ «Թուղթն երանելւոյն Յովհաննու եպիսկոպոսապետին Աղեքսանդրի»: Սակայն ուշագրավ է, որ «Կնիք հաւատոյ» դավանաբանական ժողովածուում՝ սույն փաստաթղթի վերնագրում, հստակ նշված է «Երանելւոյն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթուղիկոսի՝ ի հակաճառութենէն Քաղկեդովնի ժողովոյն, որ ասի Ապացոյց»:

Նշենք նաեւ, որ դավանաբանական այս վավերագիրը շարադրված է բավականին անհստակ ու խրթին, կառուցվածքային առումով համակարգված չէ: Հնարավոր է նաեւ, որ հենց բնագիրն է դժվարընկալելի եղել հայերեն թարգմանողի համար:

Ինչեւէ, անկախ այն հանգամանքից, որ «Գիրք թղթոց»-ում պահպանված դավանաբանական այս գրվածքի հեղինակը հայ չէ, եւ այն թարգմանություն է օտարալեզու բնագրից, սույն վավերագիրն ունի որոշակի կարեւորություն եւ արժեք. այն հայ իրականության մեջ դավանաբանական հնագույն գրվածքներից է, որը հիմնավորապես մերժում է Քաղկեդոնի ժողովի որոշումներն ու երկաբնակությունը:

«Ապացոյց յերկուց բնութեանց....»-ի հեղինակը կարողացել է դավանաբանական վտանգների միջեւ գտնել այն ճշմարիտ ճանապարհը, որն ուղղորդված է առաքելական վարդապետությամբ: Այս գրվածքը կարծես ամփոփում է Նիկիո-կոստանդնուպոլսյան հավատո հանգանակի դավանաբանական սահմանումները. դրանում մերժվում են երեւութականությունը, Ապողինար Լաոդիկեցու վարդապետությունը, երկաբնակությունը: Այն իր ուրույն տեղն է զբաղեցրել հայ աստվածաբանական-դավանաբանական մատենագրության մեջ:

Հայ Եկեղեցու հայրերը մշտապես ջանացել են անաղարտ պահել առաքելավանդ վարդապետությունը՝ զգուշանալով Աստծու խորհուրդները մարդկային բանականությամբ մեկնելու, քննելու եւ վերլուծելու փորձությունից. նրանց նշանաբանը եղել է Պողոս առաքյալի խոսքը՝ *«Հաւատք ձեր մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան, այլ՝ զօրութեամբ Աստուծոյ»* (*Ա Կորնթ. Բ 5*):

«Ապացոյց յերկուց բնութեանց ասել զՓրկիչն եւ կամ մի բնութիւն....» գրվածքի հեղինակը շեշտում է Սուրբ Երրորդության Անձերի «համագոյության» եւ «ըստ էության» նույնության» սկզբունքը՝ հակառակ նրանց, *«...որք ուրացան զՈրդի յէութենէ Հաւր՝ յաղքատութիւն եւ յապականութիւն իջուցին տաժանելք. նոյն բնութիւն Բանի Հաւր, որով ամենայն եղեւ. եւ այս առաւել իմն դիպողագոյն, զի բնութիւն Բանին աստվածութիւնն է, բոլորեցունց դաւանելի է: Քանզի չէ ոք ի Սուրբ Երրորդութեանն յայլմէ էութենէ կամ ի գոյութենէ, մի նետիւ երեքսայրեան սլաքաւորաւ սպանանեն զթշնամին արդարութեան՝ աւետարանելով զհաղթութիւն...»* («Գիրք թղթոց», Երուսաղէմ, 1994, էջ 134):

Վավերագրում հիմնավորապես մերժվում է երկաբնակությունը եւ նշվում, որ քրիստոնեական վարդապետությունը պետք է հիմնվի Աստվածաշնչի եւ առաքելական Ավանդության վրա. *«Եւ քանզի առաքելականն եւ մարգարէիցն կտակքն ո՛չ ուրեք յիշատակեն զերկուց բնութեանց այլութիւն, ապա պարտ է անդրդուելի խոստովանութեամբ դաւանել ի Սուրբ Երրորդութեանն, զԲանն Աստուած զմարմնացեալ....»* (անդ, էջ 128):

Նույն խնդրի վերաբերյալ մեկ այլ հատվածում նշվում է. *«...խոստովանիմք զգալն (թերեւս պետք է լինի զգոլն) ընդհանուրս՝ երկրպագելով երիցն իսկապէս անձնաւորութեանցն, եւ միում աստուածութեանն: Ունիմք զաւանդութիւնս զայս, սիրելիք, յերջանիկ առաքելոցն եւ ի ճշմարիտ հարցն, որք ամենակալ քարոզեցին զՀայրն եւ ի մի Տէր զՅիսուս Քրիստոս....»* (անդ, էջ 129):

Շարունակելի

Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ

Սկիզբը՝ 2019-ի թիվ 21–23

Հայաստանի խաղաղ զարգացումը խաթարվեց 1920 թ. թուրք-հայկական պատերազմի հետեւանքով: Դեռեւս պատերազմի օրերին Երեւան տեղափոխվեց համալսարանը, որի հետագա գործունեությունը պարզապես անհնարին դարձավ թուրքերի կողմից գրավված Ալեքսանդրապոլում: Համալսարանը չկարողացավ վերսկսել իր պարապմունքները միակ՝ պատմալեզվաբանական ֆակուլտետում: Այդ մասին են փաստում դեկանի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Մանանդյանի՝ պատմալեզվաբանական ֆակուլտետի գործունեության մասին 1920 թ. հոկտեմբերի 17-ին գրած մի զեկուցագիրը, ինչպես նաեւ նույն ֆակուլտետի դասախոսների՝ 1920 թ. հոկտեմբերի 29-ի արձանագրությունը, որում մասնավորապես ասվում է. «1920 թ. հոկտեմբերի 29-ին՝ երեկոյան ժամը 5-ին, տեղի ունեցավ Երեւանի համալսարանի պատմալեզվաբանական ֆակուլտետի վեցերորդ նիստը: Նախագահում էր ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Հ. Մանանդյանը, իսկ արձանագրում էր Ե. Ֆրանգյանը: Ներկա էին Ս. Տիգրանյանը, Մ. Աբեղյանը, Ռ. Աբրահամյանը, Ա. Քալանթարը, Ե. Տեր-Մինասյանը եւ Ա. Գասպարյանը:

Օրակարգն էր՝

1. ֆակուլտետի բացման հարցը,
2. նոր խնդրատուներ ընդունելու հարցը:

Ս. Տիգրանյանն առաջարկում է մեկ շաբաթով հետաձգել ֆակուլտետի վերաբացումը՝ նկատի ունենալով ռազմաճակատի լուրջ դրությունը: Կարծիքների կարճ փոխանակությունից հետո ձայների մեծամասնությամբ որոշվեց մնալ նախկին վճռին, այսինքն՝ թողնել ֆակուլտետի վարչությանը հայտարարելու ֆակուլտետի աշխատանքների սկզբի մասին, երբ այդ հնարավոր կգտնի» (*տես Լ. Ղարիբջանյան, նշվ. աշխ., էջ 44*):

Փաստորեն՝ դրությունը ռազմաճակատում այդպես էլ չկարգավորվեց: Հանրապետություն Ալեքսանդրապոլի պայմանագրով կորցրեց ոչ միայն Սեւրի պայմանագրով Հայաստանին տրված Արեւմտյան Հայաստանի տարածքները, այլեւ իր փաստական վերահսկողության տակ գտնվող հողերի կեսը:

Խորհրդային իշխանության հաստատման առաջին ամիսներին համալսարանը վերաբացվեց Երեւանում: Որքան էլ սուր էր խորհրդային նորաստեղծ իշխանությունների բացասական վերաբերմունքը Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարության նկատմամբ, այնուամենայնիվ, կարեւորելով համալսարանի գոյության պատմական փաստը, որոշվեց ոչ թե փակել, այլ ուղղակի վերակազմել այն՝ հարմարեցնելով իր շահերին ու խնդիրներին: Միաժամանակ ելնելով գիտակրթական այդ կարեւոր օջախը միայն խորհրդային իրավակարգի ծնունդ տեսնելու ցանկությունից՝ հարկ է նկատել, որ տասնամյակներ շարունակ անտեսվել են Հայաստանի առաջին Հանրապետության սկզբնական տարիներին արված ձեռնարկումները եւ գոյություն ունեցող փաստաթղթերը:

Ըստ ՀԽՍՀ առաջին լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի 1920 թ. դեկտեմբերի 17-ին ստորագրած առաջին իսկ հրամանի («Երեւանի համալսարանը վերակազմելու մասին»)՝ «Երեւանի համալսարանը վերակոչվում է Երեւանի ժողովրդական համալսարան, նախկին համալսարանի ֆակուլտետները փակվում են, եւ հիմնվում է երկու բաժանմունք՝ բնագիտական եւ հասարակագիտական, իսկ նախկին համալսարանի բոլոր պրոֆեսորները, դոցենտները, պրիվատ-դոցենտները, դասատուները եւ ասիստենտները համարվում էին արձակված: Լուսավորական ժողովրդական կոմիսարիատին կից կազմակերպվում է համալսարանի վերակազմության հանձնաժողով, որի վրա պարտականություն է դրվում սույն հրամանը հրապարակելու օրից մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել կոմիսարիատին հաստատության՝ նոր համալսարանի կազմակերպման հիմունքները, ծրագիրը, դասախոսների կազմը եւ շտատները: Հանձնաժողովի նախագահ է նշանակվում ընկ. Կողբետլյանցը, անդամներ՝ ընկ. ընկ. Գ. Չուբարյանը, Գ. Պիճիկյանը եւ ուսանողության երկու ներկայացուցիչներ» (*ՀԽՍՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու, պրակ 1, էջմիածին, 1921, էջ 17–18*):

Անհրաժեշտ էր անմիջապես մշակել համալսարանի նոր կանոնադրությունը, համալսարանը լիովին ապահովել պրոֆեսորադասախոսական կազմով, լուծել ուսանողության ընդունելության, ուսումնական ծրագրերի եւ բարձրագույն ուսումնական հաստատության աշխատանքն ապահովող նյութական ու կազմակերպչական բազմաթիվ հարցեր: Հանձնաժողովը շուտով լուսժողկոմատին է ներկայացրել համալսարանի կանոնադրության երկու նախագիծ, որոնցից մեկի նախատիպը Հայաստանի համալսարանի նախկին կանոնադրությունն էր (դրան կողմնակից էին Ե. Կողբետլյանցը եւ Գ. Պիճիկյանը), իսկ մյուսը՝ որպես նոր տիպի համալսարան, կազմվել էր ՌԽՖՍՀ կառավարության 1918 թ. օգոստոսի 2-ի դեկրետի եւ հոկտեմբերի 1-ի օրենքի հիման վրա (*տես Լ. Ղարիբջանյան, նշվ. աշխ., էջ 48*): Լուսժոմկոմատը որոշ փոփոխություններով ընդունեց երկրորդ նախագիծը եւ 1920 թ. դեկտեմբերի 28-ին հաստատեց Երեւանի համալսարանի ժամանակավոր կանոնադրությունը (*տես ՀԽՍՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու, պրակ 1, էջմիածին, 1921, էջ 35–39*): Նույն օրն էլ ՀԽՍՀ լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը ստորագրեց «Երեւանի ժողովրդական համալսարանի կազմակերպման մասին» հրամանը (*տես նույն տեղում, էջ 34–35, նաեւ «Կոմունիստ», 1921, հունվարի 4*):

Շարունակությունը՝ էջ 8

ԴԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Սկիզբը՝ էջ 6

«Երգք Նահապետի» շարքի տասնմեկ բանաստեղծությունների հեղինակը թեեւ կրոնավոր է ու կաթոլիկ վարդապետ, սակայն մյուս Մխիթարյանների նման նա չի դարձել անցյալի անկյանք ավերակների ու փլեկված հուշարձանների անմխիթար ողբասաց, թեեւ Խորենացու, Նարեկացու, Շնորհալու եւ միջնադարյան այլ ողբերի օրինակով նա եւս Հայոց աշխարհի ներկա վիճակը համարում է ողբալի եւ նախնիների հերոսական ոգին ու իրագործած սխրանքները՝ նոր սերունդների համար օրինակելի: «Հայոց աշխարհիկ», «Հայ հայրենիք», «Ողբամ զքեզ, Հայո՛ց աշխարհ», «Մասիսու սարերն», «Աշոտ Երկաթ ի ծովուն Սեւանա», «Լուսնկայն գերեզմանաց Հայոց» բանաստեղծություններում չկա ներկայի անմխիթար վիճակին համակերպվելու, չարին չհակառակվելու անմիտ քարոզչություն, ընդհակառակը, կա ազգ ու երկիր չուրանալու, կորուստները վրիժառությամբ հետ բերելու, բոլոր հնարները գործադրելու եւ զինված պայքարով հաղթանակներ նվաճելով՝ նախնիների փառքին արժանանալու հստակ պատգամախոսություն, որն իրականացվում է անցյալը եւ ներկան միմյանց շաղկապող քնարական հերոսի՝ ծեր Նահապետի՝ պատմական հիշողությամբ ու կենսափորձով հարուստ հայի պայմանական կերպարով: Ընդ որում՝ «Բազմավեպում» առաջին անգամ հրատարակելուց հետո Ղ. Ալիշանը «Նվագք» ժողովածուի «Հայրունի» հատորի երկու՝ 1858 եւ 1867 թթ. հրատարակություններում այս բանաստեղծությունների զգալի մասը ենթարկել է լեզվաոճական նկատելի մշակման, որով բարելավվել է նրանց գեղարվեստական մակարդակը:

Ղ. Ալիշանի այս եւ մյուս գործերն անանց գեղարվեստականի հետ միասին ունեն պատմաճանաչողական եւ ուսուցողական անգնահատելի արժեք: Հակադրելով անմիթար ներկան եւ անցյալի դրախտավայր երկիրն ու նախնիների հերոսական փառքերը՝ նա ծերունի Նահապետի անունից իսկական հայրենագիտական դասեր է տալիս նոր սերունդներին՝ ակնկալելով, որ իր ձայնը կարձագանքվի նրանց հոգիներում.

Զեզ կասեմ մանկունք սիրուն նազելիք,
Որոց է բնական Հայոց աշխարհիկ,
Մ՚ ուրանաք զերկիրդ ու զազգդ սիրուն,
Ծառն արմատով է ծառ, տունն յիմամբ է տուն:

Իսկ ո՞րն է հայ սերունդների դրախտավայր հայրենիքը, որ դարձել է օտարի բաժին, իսկ բնիկ տերերն էլ աշխարհով մեկ դարձել են թափառական.

Մեր Տերն ի երկնուց ծայրեն երբ իջավ,
Երկրիս հիման քարն յԱյրարատ դրավ,
Այն Մեծ Մասիսու երկնաձեւ սարեն
Աչե զբոլոր՝ վերացավ նորեն,
Հոն չափեց սահման յուր նախաստեղծին
Զ Փեփրատն ու Զերասխ բաժակ դրավ
դրախտին,
Կենաց փայտին ծառն ի հոն ծաղկեցավ,
Չար գիտութենե բարին մեզ տվավ,
Ի Հայոց հողեն կազմեցավ Ադամ,
Զօդն Հայոց Եվայն ծընծեց քաղցրահամ:

Այսօրվա հայը զրկված է աստվածաստեղծ դրախտից, ողբալի ներկան նրան հարկադրել է վերցնել պանդուխտի ցուպը եւ ճաշակել հայրենակարոտության դառը զգացումները:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱՇՈՏ ԵՐԿԱԹԻ ԿԵՐՊԱՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՄՈՒՐԱՑՅԱՆԻ «ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ

Պատմական անցքերն առհասրակ մեծ տեղ ունեն գրական ստեղծագործությունների գեղարվեստական համակարգում: Բազմաթիվ են դեպքերը հայ գրականության պատմության մեջ, երբ հեղինակի ստեղծագործական նյութի համար հիմք է դառնում պատմական որեւէ ժամանակաշրջանն ընդգրկող այս կամ այն երկը:

Հայ պատմիչների աշխատությունները կարեւոր եւ օգտակար ազդեցություն թողեցին ոչ միայն իրենց ապրած ժամանակաշրջանի, այլեւ դարերի համար: Աշխատություններից յուրաքանչյուրն իր յուրովի ներդրումը բերեց հայ գրականության մի շարք երկերի ստեղծման գործում: Ստեղծագործական այս մոտեցումը հիմնարար նշանակություն ունեցավ նաեւ հայ մեծանուն գրող Մուրացանի պատմագեղարվեստական երկերի համար: Կարելի է ասել, որ պատմությունը մի գանձարան էր, որտեղից Մուրացանը քաղել է ազգի, հայրենիքի պահպանության իր իդեալը եւ այդ իդեալը մարմնավորող հերոսներին: Հենց ինքը՝ Մուրացանը, գրում է. «Ամեն մի գործ ստեղծելու ժամանակ իմ աչքի առջեւ ունեցել եմ հայ ժողովուրդը, նրա անցյալը, նրա պատմությունը, նրա տխուր ներկան. Լա՞վ եմ գրել թե վատ, նրա համար եմ գրել, նրան եմ կամեցել իմ մտքերն ու զգացմունքները հաղորդել» (*Պարտիզունի Վ., Մուրացան, Երեւան, 1956, էջ 3*): Այս ոգով էլ գրվել են Մուրացանի պատմագեղարվեստական երկերը՝ «Անդրեաս երեց», «Ռուզան», «Գեւորգ Մարզպետունի»:

Պատմության, արվեստի, հզոր տաղանդի փառահեղ ծնունդ է «Գեւորգ Մարզպետունի» պատմավեպը՝ լի պատմականությամբ եւ գեղարվեստական հարուստ երեւակայությամբ: Մուրացանը գրում է. «Պատմագեղարվեստական գործի հեղինակը պարտավոր է խորապես ուսումնասիրել պատմությունը, աղբյուրները եւ ձգտել ճիշտ ներկայացնել պատմությունը... Եթե գեղարվեստագետը փաստերն ու դեպքերը նկարագրի «ճիշտ այնպես», ինչպես պատմագիրները, այն ժամանակ նա, Բելինսկու արտահայտությամբ, կդառնա «միայն ընդօրինակող, արտագրող եւ ոչ թե ստեղծագործող», այն ժամանակ նա չի կարող քննադատական մոտեցում հանդես բերել պատմագիրների նկատմամբ, ինչպես եւ կդադարի գեղարվեստական գործի հեղինակ լինելուց...» (*նույն տեղում, էջ 260*):

Պատմությունն ընդունելով որպես ուղենիշ եւ պատմությունից դասեր քաղելով է Մուրացանը գրում իր հայտնի պատմավեպը՝ «Գեւորգ Մարզպետունին»: Վեպի նյութն առնված է Բագրատունիների՝ տասներորդ դարի թագավորական հարստության իրադարձություններից: Մուրացանը տասնիններորդ դարից տասներորդ դար հետադարձ թռիչք կատարել է՝ հենվելով մասնավորապես Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու եւ Անանուն պատմիչի պատմագրությունների վրա:

Վերոբեյալը նկատի ունենալով՝ կփորձենք քննության առնել Աշոտ Երկաթի կերպարը՝ պատմության եւ Մուրացանի «Գեւորգ Մարզպետունի» պատմավեպի մեջ:

Աշոտ Երկաթը Բագրատունյաց հարստության երրորդ գահակալն էր, հաջորդում էր քաջ եւ հայրենասեր հորը՝ Սմբատ Բագրատունուն: Աշոտ արքայի մասին բավականին շատ տեղեկություններ են պահպանվել պատմական սկզբնաղբյուրներում: Պատմիչ Հ. Դրասխանակերտցին գրում է, որ Աշոտի մանկության, երիտասարդության, հարձակումների ու արշավանքների մասին մեծաքանակ տեղեկություններ է տալիս Շապուհ պատմագիրը:

Շարունակությունը՝ էջ 8

ԱՇՈՏ ԵՐԿԱԹԻ ԿԵՐՊԱՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՄՈՒՐԱՑՅԱՆԻ «ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ

Սկիզբը՝ էջ 7

Դրասխանակերտցին գրում է. «Իր հոր՝ Սմբատի փոխարեն (Աշոտն) է տիրում Հայոց սպարապետությանը, իրենից առաջ եղողներից գրեթե ամենաբարձրն ինքն է ճանաչվում, քանի որ ընդունելով մեծարանքներ՝ արհամարհում էր անարգանքը եւ միշտ իրեն վարժեցնում էր բարի կրթության ու ուսման մեջ» (*Դրասխանակերտցի Հ., Հայոց պատմություն, Եր., 1995, էջ 135: Այսուհետ այս հրատարակությունից արված մեջբերումների պարագայում կնշվի միայն էջը*): Այնուհետեւ Հ. Դրասխանակերտցին ներկայացնում է Աշոտի՝ իշխանաց իշխան կարգվելը Ալի Արմանի անունով ոստիկանի կողմից. «Հայաստան ուղարկված Ալի Արմանի անունով մի ոստիկան ամիրապետի հրամանով նրան (Աշոտին) կարգում է Հայոց իշխանաց իշխան՝ զարդարելով բազում զգեստներով եւ արքունական պատվով, նրան վստահելով Հայոց հարկերն ու արքունի ամբողջ տուրքը» (*էջ137*): Վ. Պարտիզունին, անդրադառնալով Աշոտ արքայի կերպարին, մեջբերում է Ասողիկի «Տիեզերական պատմության» այն հատվածը, երբ հոր մահից հետո Աշոտն է ղեկավարում կռիվը հակառակորդների դեմ եւ միավորում է երկրի ուժերն ընդդեմ ներքին ու արտաքին թշնամիների: Հատկապես արաբական զորքերի դեմ մղած ծանր եւ երկարատեւ մարտերում Աշոտ Երկրորդը դրսեւորեց տաղանդավոր ու աննկուն զորավարի գծեր, որի համար հռչակվեց «Երկաթ» (*Պարտիզունի Վ., Մուրացան, Երեւան, 1956, էջ 376*): Հ. Դրասխանակերտցին Աշոտ արքայի մականվանը չի անդրադառնում: Պատմիչի աշխատության մեջ առաջին անգամ Աշոտի անունը հանդիպում է այն ժամանակ, երբ որպես պատանդ՝ գտնվում էր Ափշին ամիրայի մոտ: Ափշինն օգտվում է հայ նախարարների անմիաբանությունից եւ սկսում իր արշավանքները դեպի Հայաստան: Դաժան գործողությունների հետեւանքով Ափշին ամիրայի մոտ պատանդ են մնում թագաժառանգ Աշոտը եւ նրա հորեղբոր որդին՝ Սմբատը:

«Գեւորգ Նահապետի մահվանից առաջ Աշոտ արքայորդին դեռ պատանդ էր Ափշինի մոտ: Նույն այն ներքինապետը, որ Սեւորդյաց Նահապետին սպանեց, մտերիմ բարեկամ էր Սմբատ թագավորին: Վերջինս երբ նահապետի մահվան լուրը լսեց, մեղադրական գրեց ներքինապետին՝ այնպիսի անմեղ մարդը սպանելուն համար: Ներքինապետը որպեսզի թագավորի սիրտն ամոքե, Ատրպատական վերադառնալուն պես, Ափշինից ծածուկ, ազատեց Աշոտ արքայորդուն եւ մի քանի իշխանազն հայ կանանց եւ ուղարկեց Սմբատին: Թագավորն իհարկե շնորհակալ եղավ ներքինապետին... » (*Մուրացան, Գեւորգ Մարզպետունի, Եր., 1989, էջ 28: Այսուհետ այս հրատարակությունից արված մեջբերումների պարագայում կնշվեն միայն «Մ» տառը եւ էջը*): Այս փաստի առումով Մուրացանը հարազատ է մնացել պատմական աղբյուրներին: Հետեւելով Դրասխանակերտցու Պատմությանը՝ նա նույնությամբ ներկայացնում է Աշոտի պատանդությունից ազատվելը. «Բայց երբ ներքինապետը գնում է արքայի մոտից, ճանապարհին հրապուրվում է դեպի չարը հակամիտված ու բանսարկու մարդկանց խոսքերով, մեկնում է Սեւորդյաց Գեւորգ նահապետի մեծ զորքի հետ, եւ այնուհետեւ նրանք խմբով հարձակում են գործում... նրանք սրի քաշվեցին եւ իրենց անունները գրեցին կենաց գրքում» (*էջ 191*): Այսպես է ներկայացնում Հ. Դրասխանակերտցին Սեւորդյաց Գեւորգ նահապետի մահվան պատմությունը, իսկ Աշոտ արքայորդու՝ պատանդությունից ազատվելու վերաբերյալ հետեւյալն է գրում. «Իսկ դրանից հետո ներքինապետը, վախենալով ու հեռանալով Ափշինից եւ իր հետ վերցնելով արքայի որդի Աշոտին, ով պատանդ էր եւ գտնվում էր ներքինու մոտ՝ բանտում, ինչպես նաեւ նրա եղբայր Մուշեղի կնոջը, ում գերել եւ տարել էին Կարուց բերդից, իսկույն գալիս հասնում է Սմբատ արքայի մոտ եւ նրան տալիս է նրա որդուն հարսի հետ միասին» (*էջ 191*): Պատմական աղբյուրներում Սմբատ արքան պատվում է ներքինապետին՝ որդուն ազատելու համար: Սմբատ արքայի եղերական մահվանից հետո արքայորդի Աշոտը գրավում է հոր տերության այն տարածքները, որոնք նվաճել էին հագարացիները: Նա իր եղբայր Աքասի հետ իրենց զորաջոկատներով հանկարծակի ու սրընթաց հարձակումներով լուրջ հարվածներ են հասցնում թշնամու ուժերին եւ քայլ առ քայլ ազատագրում երկիրը: Ասպատակություններից մեկի ժամանակ Աշոտը հարձակում է գործում Տփխիսի (Թիֆլիս) ամիրայության վրա, 200 հոգով ջախջախում Յուսուֆի կայազորը: Եվ այս ժամանակ, հայոց երկրի ուժերը պառակտելու միտումով, արաբները Հայաստանի թագավոր են հռչակում Աշոտի հորեղբորորդուն՝ Աշոտ սպարապետին: Երկրում սարսափելի իրավիճակ է ստեղծվում՝ իշխանների անմիաբանություն, պետության պառակտվածություն, թշնամիների ոտնձգություններ, սով, մահ, ավեր: Պատմական փաստերին հարազատ մնալով՝ Մուրացանն իր պատմավեպում անդրադառնում է երկրի այս ծանր ժամանակաշրջանին. «Ամբողջ երկու տարի բուն Հայաստանը կռվի եւ արյան դաշտ էր դարձած, բոլոր այդ ժամանակ գյուղացիք վարել, ցանել ու հնձել չէին կարողացել: Եվ ինչպե՞ս կարողանային, քանի որ դաշտ ու ձոր, լեռ ու անտառ հագարացի զորքերով ու հելուզակներով էին բռնված, իսկ ազատ անկյուններումն էլ հայ զորքերն էին միմյանց կոտորում, հայ իշխաններն իրար ջնջում: Այս պատճառով երկրագործները ցրվեցան, այգիներն ու դարաստաններն անխնամ մնացին, ժողովրդի վերջին պաշարը վայրենի զորքերը սպառեցին, եւ սովը յուր զարհուրելի հետեւանքներով բռնացավ Հայաստանի մեջ... հրապարակները լցվել էին մերկ կամ հազիվ ցնցոտիներով ծածկված սովատանջ մարդկանցով, որոնք շրջում էին իբրեւ ուրվականներ եւ միմյանց դիպչելուց անշնչացած ընկնում փողոցի մեջ... Փոքր ի շատե ուժ ունեցողները հարձակվում էին այդ դիակների վրա եւ նրանց միսը ատամներով հոշոտելով լափում...» (*Մ., էջ 49*): Այս պատկերները նույնությամբ կան նաեւ պատմական սկզբնաղբյուրներում, սակայն վեպում իրականությունը ներկայացված է ավելի վառ գույներով: Մուրացանը կարողացել է իր երեւակայության շնորհիվ սարսռազդու տեսարաններ ստեղծել: Եվ այս պայմաններում հայոց սպարապետ Աշոտը դեռ միաբանված էր Յուսուֆի հետ, իսկ թագաժառանգ Աշոտը շարունակ տեղից տեղ էր անցնում եւ բազում քաջագործություններ գործում՝ պարտության մատնելով նաեւ Աշոտ սպարապետի զորքին: Իսկ կաթողիկոս Հ. Դրասխանակերտցին ամեն ինչ անում էր՝ այս երկուսի միջեւ հաշտություն սերմանելու համար, որի հետեւանքով նրանք հաճախ կշտամբում էին կաթողիկոսին: Այսքանն է պատմում Հ. Դրասխանակերտցի պատմիչը մինչ Աշոտի թագադրությունը Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների եւ Աշոտ Երկրորդի գործողությունների մասին:

Շարունակելի

Սամվել ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ

Սկիզբը՝ էջ 7

Երեւանի ժողովրդական համալսարանի կանոնադրությունը եւ նրա առաջին շրջանի գործունեությունը ցույց են տալիս, որ այստեղ հենց սկզբից հաշվի էին առնվել Խորհրդային Ռուսաստանի փորձը, 1917–1920 թթ. ընթացքում բարձրագույն դպրոցի վերակառուցման համար ձեռնարկված միջոցառումները: Երեւանի ժողովրդական համալսարանն առաջին իսկ օրվանից իր աշխատանքն սկսեց իբրեւ նոր տիպի բարձրագույն դպրոց (*տե՛ս Լ. Ղարիբջանյան, նշվ. աշխ., էջ 49*): Նրա կանոնադրության առաջին իսկ հոդվածում շեշտվում էր, որ նորաստեղծ՝ «Երեւանի ժողովրդական համալսարանը բանվորագյուղացիական ազատ դպրոց է, որ մասսաների սեփականությունն է դարձնում բնական եւ սոցիալական գիտություններն ու նրանց ուսումնասիրության մեթոդները՝ նպաստելով կյանքի գիտակցական վերաշինությանը կոմունիստական աշխարհայացքի հիմունքներով» (*ՀԽՍՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու, պրակ 1, էջ 35*): Այդ նպատակով, ինչպես նշված է կանոնադրության մեջ, «... Ժողովրդական համալսարանը կազմակերպում է դասընթացներ եւ հատվածական դասախոսություններ, գործնական, լաբորատորական եւ սեմինարական աշխատանքներ, հրատարակում է ամեն տեսակի աշխատություններ եւ օժանդակիչ ձեռնարկներ, կազմակերպում է գրադարան-ընթերցարան, թանգարան եւ այլն» (*նույն տեղում*):

Կանոնադրության համաձայն՝ համալսարանի բարձրագույն օրգանը նրա խորհուրդն էր, որի կազմում ընդգրկված էին դեկաններ, երեք ներկայացուցիչ դասախոս (*Համալսարանի խորհրդի առաջին կազմում 1921 թ. հունվարի 2-ին տեղի ունեցած նիստում փակ (գաղտնի) քվեարկությամբ դասախոսներից ընտրվեցին Հ. Մանանդյանը, Ե. Կողբետլյանցը եւ Կ. Սավիչ-Զաբլոցկին: Տե՛ս Մատենադարան, անհատական արխիվների ֆոնդ, թղթապ. 222, վավ. 92, թթ. 57–58*), մեկական ներկայացուցիչ կոմկուսից, լուսժողկոմատից, արհմիությունից, կուլտուր-կրթական կազմակերպություններից ու պրոլետկուլտից եւ հինգ ներկայացուցիչ ուսանողներից: Խորհրդում վերջիններիս մասնակցությունը կանոնադրությամբ նախատեսվում էր բուհերի ղեկավարման գործին ուսանողությանը մասնակից դարձնելու վերաբերյալ ՌԽՖՍՀ լուսժողկոմատի 1918 թ. նոյեմբերի 18-ի որոշմամբ, որն ընդունվել էր կուսակցության Կենտկոմի ցուցումով՝ որպես բարձրագույն դպրոցը դեմոկրատացնելու ուղղությամբ կիրառված քայլ (*տե՛ս Լ. Ղարիբջանյան, նշվ. աշխ., էջ 49–50*):

Կանոնադրության համաձայն՝ համալսարանի խորհրդի իրավասության մեջ մտնում էին հետեւյալ խնդիրները՝ վարչակազմի ղեկավարությունը, ֆակուլտետների կողմից առաջադրվող դասախոսների հաստատումը, բյուջեի սահմանումն ու իրացումը, ռեկտորի ընտրությունը: Տարաձայնությունների դեպքում հարցի վերջնական լուծումը վերապահվում էր լուսավորության ժողովրդական կոմիսարիատին (*տե՛ս ՀԽՍՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու, պրակ 1, էջ 38*): Համալսարանի խորհրդում լուսժողկոմատի առաջին ներկայացուցիչն էր բանասեր Կարապետ Մելիք-Օհանջանյանը, իսկ ՀԿ(բ)Կ կենտկոմի ներկայացուցիչը՝ Վահան Շահգելդյանը (նա ուսանող էր) (*տե՛ս ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 261, թ. 12, գ. 20, թ. 4*): Թեեւ խորհրդի նիստում հարցերն ընդհանրապես լուծվում էին բաց քվեարկությամբ (եթե խորհրդի անդամների մեկ չորրորդը չէր պահանջում փակ քվեարկություն), սակայն ռեկտորի, վարչության անդամների եւ դասախոսների ընտրությունը կատարվում էր փակ քվեարկությամբ: Ժամանակավոր կանոնադրությունից երեւում է, որ համալսարանի ղեկավարման համակարգը հենց սկզբից դեմոկրատական բնույթ ուներ, որն ապահովում էր դասախոսների եւ ուսանողների լայն մասնակցությունն արմատական հարցերի քննարկման եւ լուծման գործում (*տե՛ս Լ. Ղարիբջանյան, նշվ. աշխ., էջ 50*):

1921 թ. հունվարի սկզբին լուսժողկոմատը հրավիրեց համալսարանի խորհրդի առաջին նիստը, որտեղ քննարկվեց նրա վարիչի (ռեկտորի) ընտրության հարցը (ռեկտոր անվանվել է 1922 թ. փետրվարից): Փակ (գաղտնի) քվեարկությամբ ռեկտոր ընտրվեց պատմաբան Հակոբ Համազասպի Մանանդյանը (*Համալսարանի ռեկտորներից միայն Հակոբ Մանանդյանն է, ըստ ժամանակավոր կանոնադրության, ընտրվել փակ (գաղտնի) քվեարկությամբ: Հետագայում ռեկտորները նշանակվել են ՀԽՍՀ լուսժողկոմատի, ԽՍՀՄ բարձրագույն կրթության պետական կոմիտեի, ապա՝ մինիստրության կողմից, տե՛ս Լ. Ղարիբջանյան, նշվ. աշխ., էջ 50*): Պատմալեզվաբանական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ականավոր պատմաբան Հ. Մանանդյանը եղավ համալսարանի երկրորդ ռեկտորը: Նա բազմակողմանի եւ խոր գիտելքների տեր հայագետ էր: Անցել էր հիանալի դպրոց՝ ուսանելով Ենայի, Լայպցիգի, Ստրասբուրգի, Սանկտ Պետերբուրգի եւ Դորպատի համալսարաններում: Հ. Մանանդյանը հեղինակ է հայերեն, ռուսերեն եւ գերմաներեն ավելի քան 150 աշխատության՝ նվիրված հայոց հին եւ միջնադարյան պատմությանն ու բանասիրությանը, պատմական աշխարհագրությանն ու մշակույթին: ԵՊՀ-ում 1921–1931 թթ. նա առաջինն էր, որ դասավանդել է հայ ժողովրդի հին եւ միջնադարյան պատմություն: Ռեկտորի պարտականություններից ազատվելուց հետո Հ. Մանանդյանը ղեկավարել է արեւելագիտական եւ պատմագրության ֆակուլտետները, 1921–1925 թթ. եղել է համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, իսկ 1925 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1939 թ. նա ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ, իսկ 1943 թ.՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1925–1931 թթ. եղել է ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր:

Դեռեւս 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին ձեւավորվել էին եւ գրեթե լիովին հայտնի էին պատմալեզվաբանական ֆակուլտետ դիմած բոլոր 90 դիմորդների (ընդունվածների) անունները: 1921 թ. հունվարի 23-ին նախապատրաստական աշխատանքներից հետո Երեւանում տեղի ունեցավ համալսարանի հանդիսավոր բացումը, իսկ հունվարի 24-ին վերսկսվեցին պարապմունքները:

Շարունակելի

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 16.01.2020 թ.
Տպաքանակը՝ 1175